



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՈՒՄԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



ՆՈՐԹ ՀՈՒԿՎՈՒՄԻ ՀԱՅՑ. ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ՆՈՐԱԿԱԶՄ ԵԿԵՂԵՑՄՈՅ  
Ս. ԾՆՆԴԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳԸ ԵՒ ԶՐՕՐՅՆԵՔ

## **ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԵՋ ՉԾՆԱՄ ՅԻՍՈՒՍ, ԲԱՅՑ** **ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԾՆԱՄ ԱԾԽԱՐՅԻ ՓՐԿԻՉԸ**

Պըրպէնքէն մինչեւ Վէն Նայս տարածաշրջանի մէջ կ'ապրին 20 հազարէ աւելի հայեր, որոնք խնդրամատոյց եղած էին Ազգ. Առաջնորդարան, ունենալու համար ծխական համայնք եւ բաւարարելու շրջանի եկեղեցական-հոգեւոր կարիքները:

Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան եւ Խառն Ժողովը, ընդառաջելով Նորթ Հոլիվուտի հայութեան խնդրանքին, կազմեցին «Նորթ Հոլիվուտի Հայց. Առաքելական Եկեղեցի» ծխական նոր համայնքը:

Մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօներուն առթիւ, Երեքշաբթի, 6 Յունուար 2009ին, առաւօտեան ժամը 10:30-ին, Նորթ Հոլիվուտի Ս. Պօղոս Քաղղեական կաթօլիկ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ ծխական այս համայնքի անդրանիկ Ս. Ժատարագը: Ներկայ էին աւելի քան չորս հարիւր հաւատացեալներ, որոնց շարքին Ազգ. Վարչութեան անդամներ, գլխաւորութեամբ վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան: Ս. եւ անմահ պատարագէ ետք, տեղի ունեցաւ ջրօրհնէքի հոգեպարար արարողութիւն:

Պատարագիչն էր ծխական շրջանի հոգեւոր մատակարար Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան: Պատարագի երգեցողութիւնը կատարեց եկեղեցիներու երիտասարդաց կազմերու անդամ-անդամուհիներ առաջնորդութեամբ Մելինէ Համբարձումեանի: Պատարագիչ Հայր Սուրբը քարոզի ընթացքին անդրադարձաւ Զրիստոսի ծննդեան սքանչելի մեծ խորհուրդին ու Աստուածայայտնութեան պարագաներուն, որով Աստուած կը մարդանար, եւ որպէս մանուկ համեստ մտուրի մը մէջ կը ծնէր՝ աշխարհի մեղքին ու խաւարի մէջ խարխափող մարդկութեան Լոյս բերելու, ըլլալու խաղաղութեան Իշխան եւ Փրկիչ աշխարհի: Աստուածորդին խաղաղութեան մէջ չծնաւ, բայց խաղաղութեան եւ յաւիտենական կեանք պարգեւելու համար ծնաւ, ըսաւ Հայր Սուրբը: Զրիստոսի ծնունդը՝ հաւատքի ու նոր յոյսի մարդեղութիւնն էր: Այսօր ալ, աշխարհը երբ տնտեսական տագնապներու ու ոչ խաղաղ պայմաններու ներքեւ Զրիստոսի ծնունդը կը տօնախմբէ,

համայն մարդկությունը ականջալուր պետք է ըլլայ Բեթղեհեմեն արձագանգող հրեշտակներու աւետիսին, կորսուած խաղաղութիւնը եւ սերը վերահաստատելու. «Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն... ծնաւ Նոր արքայ Փրկիչ աշխարհի, թագաւորութիւն Նորա յաւիտեան է» (Եսայի 9: 2-7):

Հաւաքական խոստովանութենէ եւ հաղորդութենէ ետք, տեղի ունեցաւ Զրիստոսի Մկրտութիւնը խորհրդանշող ջրօրհնէքի արարողութիւնը: Կնքահայրը, փոքրիկն Նշանիկ Տէր Աբելեան եղաւ, Ս. Խաչը ձեռին, մինչ երգչախումբը կ'երգէր «Ով զարմանալի» եւ «Այսօր ձայնն Հայրական» շարականները: «Առաքելոյ Աղաւնոյ» հոգեյոյզ շարականի աւարտին, պատարագիչ Հայր Սուրբը, Ս. Խաչը օրհնուած ջուրին մէջ մխրճեց, ապա կարդացուեցաւ Զրիստոսի Մկրտութեան ամօթի Ս. Բարսեղ Կեսարացի հայրապետին գրած «Ջրօրհնէքի Աղօթքը»:

Եկեղեցական արարողութեան աւարտին, հաւատացեալներ մեծ երկիւղածութեամբ Զրիստոսի Ս. Խաչը համբուրեցին եւ որպէս հոգեւոր մխիթարութիւն, ցաւերու եւ հիւանդութեանց բժշկութիւն, Նաեւ հոգեւոր փափաքներու իրագործման ակնկալութեամբ՝ խմեցին օրհնուած ջուրէն, ապա միասնաբար երգեցին «Կիլիկիա»ն եւ «Մեր Հայրենիք»ը:

«Պահպանիչ» աղօթքէն ետք, եկեղեցւոյ կից սրահին մէջ տեղի ունեցաւ ընկերային հաւաք եւ հիւրասիրութիւն, եկեղեցասեր տիկնանց յանձնախումբին կողմէ: Խօսք առին Նորթ Հոլիվուտի Նորակազմ եկեղեցւոյ կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ Տիար Խաչիկ Թիթիգեան եւ Ազգ. Վարչութեան ատենապետ՝ Տոքթ. Կարօ Յակոբեան: Անոնք ողջունեցին անդրանիկ Ս. Պատարագին ներկայ եղող հաւատացեալները եւ հրաւիրեցին որ մասնակցութիւն բերեն եկեղեցւոյ աշխատանքներուն:

Փակման խօսքը արտասանեց Գերայ. Միւռն Շ. Վրդ. Ազնիկեան: Հայր Սուրբը հայ ժողովուրդի Ամանորն ու Ս. Ծնունդը շնորհաւորելէ եւ իր բարեմաղթութիւնները փոխանցելէ ետք, կոչ ուղղեց Նորթ Հոլիվուտի հաւատացեալներուն, որ Ամանորի եւ մանաւանդ Յիսուսի Ծննդեան տօնին ամօթի մատուցուած անդրանիկ այս պատարագով ծնունդ առած Նորթ Հոլիվուտի եկեղեցին նկատեն իրենց հոգեւոր հարազատ տունը եւ գործօն մասնակցութիւն բերեն անոր եկեղեցական, հոգեւոր ու ազգային ծառայական կեանքին ու աստուածահաճոյ առաքելութեան: «Այս հաւատքով եւ յոյսով է որ կոչ կ'ընեմ, սիրելիներ, ըսաւ Հայր Սուրբը, որ եկեղեցւոյ ներքեւ կազմակերպուելիք մարմիններուն՝ դպրաց դաս, տիկնանց, երիտասարդաց, կիրակնօրեայ դպրոց թէ Ս. Գրոց սերտողութեան դասընթացքներուն մասնակցիք եւ հոգեւորապէս հարստանաք, ուռճանաք: Ուրախ եմ յայտարարելու, շարունակեց Հայր Սուրբը, որ այսուհետեւ ամեն Կիրակի յետմիջօրէին, ժամը 2:00-ին, Ս. Պատարագ պիտի մատուցուի, իսկ Չորեքշաբթի երեկոները, ժամը 6:30-էն 8, տեղի պիտի ունենայ եկեղեցական կարճ արարողութիւն եւ Սուրբ Գրային սերտողութիւն»:

Ստերմիկ ու խանդավառ մթնոլորտի մէջ, հաւատացեալներ, ամանորեան խանդավառ տրամադրութիւններով եւ Ս. Ծննդեան Նոր յոյսերու աւետիսով խանդակաթ, իրենց հետ տարին մանուկ Յիսուսի սերը, հայ եկեղեցւոյ ծառայելու պատրաստակամութիւնը եւ մեր հայրերու հաւատքով ապրելու եւ պայքարելու անխորտակ կամքը:

## **FIRST DIVINE LITURGY CELEBRATED AT THE NORTH HOLLYWOOD PARISH**

The first Divine Liturgy at the newly established North Hollywood parish was celebrated on Tuesday, January 6<sup>th</sup>, on the Feast of the Birth and Theophany of our Lord Jesus Christ. Very Rev. Fr. Muron Aznikian celebrated the Liturgy, delivered the sermon, and conducted the blessing of water ceremony at St. Paul Assyrian-Chaldean Catholic Church. Members of the Prelacy youth choir participated in the singing of the Liturgy.

Among the four hundred faithful in attendance were Executive Council Chair Dr. Garo Agopian and council members. The godfather of the cross was Nishanig Der Apelyan.

A reception took place following the services, during which the Chairman of the committee overseeing the establishment of the parish Mr. Khatchig Titizian delivered his remarks, as did Dr. Garo Agopian, both of whom welcomed the faithful and urged them to actively participate in the growth of the parish.

Closing remarks were delivered by Fr. Muron during which he announced that Divine Liturgy will hereafter be celebrated every Sunday at 2:00 p.m., and Bible study classes will take place every Wednesday from 6:30 p.m. to 8:00 p.m.

The address of the church is 13050 Vanowen Street in North Hollywood.